Արձանագրություն N 2

<<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/1>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի << ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների>> ձեռքբերման բացման նիստի

25 հուլիսի 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Եղիազարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Մելիքյան /գնահատող/, Ռ. Խոջայան /գնահատող/, Գ. Մնացականյան /բացող/, Ա. Աշուղյան /բացող/

1. Տեղեկություններ <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/1>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ռ. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2016 թվականի հուլիսի 25-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/1>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ռ. Եղիազարյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	<<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ
2	<<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ <<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/
3	ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
4	<<Գողթն>> ՍՊԸ
5	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ
6	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ, <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/
7	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ
8	<<Վանարխ>> ՍՊԸ
9	<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ <<Հազարաշեն>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ռ. Եղիազարյան)

3.1 Բանակցային ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

h/h	**ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ**					Գնման առարկայի նախահաշվային արժեքը
	Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը				
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր	
1	<<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ	5,800,000	649,000		6,449,000	18,920,000
2	<<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ <<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/	10,549,440	1,172,160		11,721,600	
3	ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	11,611,110	611,111		12,222,221	
4	<<Գողթն>> ՍՊԸ	11,400,000	1,200,000		12,600,000	
5	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ	13,500,000	1,350,000		14,850,000	
6	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ, <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/	13,636,000	1,364,000		15,000,000	
7	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	13,736,250	1,526,250		15,262,500	
8	<<Վանարխ>> ՍՊԸ	13,875,000	1,387,500		15,262,500	
9	<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ <<Հազարաշեն>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/	16,200,000	1,800,000		18,000,000	

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ռ. Եղիազարյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա անհամապատասխանությունների մասին.

Մասնակցի անունը	*Անհամապատասխանության վերաբերյալ*
<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ	Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիայի <<կապի>> ներդիրը:

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ ծանուցել 4.1 կետում նշված մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 27.07.2016թ., ժամը 11:00-ն/ շտկել նշված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի մերժման մասին.

-Հանձնաժողովի որոշեց մերժել նշված մասնակիցների հայտերը հետևյալ հիմնավորմամբ.

Մասնակցի անունը	Մերժման վերաբերյալ
<<Վանարխ>> ՍՊԸ	Վճարման պահանջագրում առկա է համարը (այն լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս), պարտադիր լրացման դաշտ է
<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	Մասնակցի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնությունը ըստ օրինակելի ձևի ենթակա է ստորագրման գնման գործընթացի մասնակցի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից: <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնության մեջ բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, որը ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ ներկայացված պարզաբանման՝ ենթակա է մերժման
<<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ <<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/	Մասնակցի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնությունը ըստ օրինակելի ձևի ենթակա է ստորագրման գնման գործընթացի մասնակցի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից: <<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ -ի և <<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնության մեջ բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, որը ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ ներկայացված պարզաբանման՝ ենթակա է մերժման, ինչպես նաև վճարման պահանջագիրը լրացվել, կնքվել և ստորագրվել է միայն <<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ -ի կողմից, մինչդեռ մասնակիցների միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրով <<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն նման պարտավորություն չի ստանձնել
<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ, <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/	Վճարման պահանջագրում առկա չէ <<Արժույթը (բառերով և կոդով)>> տողի արժույթի կոդը:
<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ <<Հազարաշեն>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/	Մասնակցի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնությունը ըստ օրինակելի ձևի ենթակա է ստորագրման գնման գործընթացի մասնակցի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից: Կոնսորցիումի անդամ <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնության մեջ բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, որը ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ ներկայացված պարզաբանման՝ ենթակա է մերժման, ինչպես նաև վճարման պահանջագրում առկա է համարը (այն լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս), պարտադիր լրացման դաշտ է

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.3 Մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5. Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Եղիազարյան)

5.1 Հանձնաժողովը որոշեց ընդհատել բացման նիստը մինչև 27.07.2016թ. ժամը 11:00-ն՝ սույն արձանագրության 4.1 կետում նշված պահանջը բավարարելու նպատակով:

5.2 Հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի հուլիսի 27-ին ժամը 11:00-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ 448 սենյակ հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Եղիազարյան

Անդամներ՝ ---------- Լ. Մելիքյան

---------- Ռ. Խոջայան

---------- Գ. Մնացականյան

---------- Ա. Աշուղյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան